ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն
Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը
ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները
Թուրքիայի Հանրապետություն, Ստամբուլ, փետրվարի 14-15-ը

4. Հրավիրող կողմը
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը
Մասնակցություն Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանում արտակարգ իրավիճակներում հանրային առողջապահության համակարգերի պատրաստվածության և արձագանքման մակարդակի բարձրացման համար գործողությունների ծրագրի իրականացմանը նվիրված բարձր մակարդակի նախարարական խորհրդակցությանը

6. Քննարկված թեմաները

Միջոցառման նպատակն էր ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի անդամ-պետությունների առողջապահության բնագավառի հիմնական պատասխանատուների մակարդակով ներկայացնել և քննարկել տարածաշրջանային այս ծրագրի լիարժեք իրականացման և արդյունքների մշտադիտարկման մեխանիզմները, ընդգծել առողջապահության բնագավառում արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և միասնական արձագանքման նշանակությունը, որոշել այն առաջնահերթ ուղղությունները, որոնց իրականացման համար անհրաժեշտ է ԱՀԿ և այլ գործընկերների աջակցությունը, ինչպես նաև կարևորել ԱՀԿ առանցքային դերը շահագրգիռ կողմերի և գործընկերների համատեղ ջանքերի համակարգման գործում:

Խորհրդակցությունը բաղկացած էր երկու մասից՝ տեխնիկական և նախարարական: Երկօրյա տեխնիկական խորհրդակցության ընթացքում, որին մասնակցել է նաև ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչը, անդամ-պետությունների փորձագետները մանրամասն քննարկել և նախարարական խորհրդակցությանը ներկայացնելու համար նախապատրաստել են Տարածաշրջանային ծրագրի գործողությունների իրականացման ձևերն ու դրանց մշտադիտարկման մեխանիզմները:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառման ժամանակ հանդես եմ եկել ելույթով և շեշտել, որ բնակչության առողջության պահպանումը և հիվանդությունների կանխարգելումն ամբողջ աշխարհում առաջնահերթություն է:
Անդրադառնալով ներկայիս կյանքում ընթացող բնական և սոցիալական պայմանների արմատական փոփոխություններին, որոնք հաճախ բնակչության առողջության համար ունենում են անկանխատեսելի հետևանքներ՝ կարևորել եմ տարածաշրջանային մակարդակում իրականացվող գործողությունները, քանի որ վարակիչ հիվանդությունների հարուցիչները, դրանց փոխանցողները սահմաններ չեն ճանաչում, նրանց համար չկա երկիր ու ազգություն, էկոլոգիական, բնական և արհեստածին աղետները կարող են տարածվել և սպառնալ ողջ երկրագնդին: Նման իրադարձությունների միջազգային տարածման կանխարգելմանն էին ուղղված 2005թ. ընդունված Միջազգային առողջապահական կանոնները, որոնք ներդնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը շարունակականորեն քաղաքական կամք է ցուցաբերում և անհրաժեշտ ռեսուրսներ է ապահովում:

Միջոցառման շրջանակներում հանդիպումներ եմ ունեցել Թուրքմենստանի, Ուզբեկստանի առողջապահության նախարարների, Վրաստանի առողջապահության նախարարի տեղակալի հետ: Թուրքմենստանի և Ուզբեկստանի առողջապահության նախարարների կողմից հրավեր եմ ստացել այցելելու իրենց երկրներ՝ առողջապահության բնագավառում համագործակցության ամրապնդման, գործնական նոր պայմանավորվածություններ ձեռք բերելու, ինչպես նաև ս.թ. ապրիլին Աշխգաբադում կայանալիք ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին նվիրված ԱՀԿ բարձրաստիճան համաժողովին մասնակցելու նպատակով: Վրաստանի առողջապահության նախարարի հետ քննարկվել են կլինիկական հետազոտությունների կազմակերպման հետ կապված հարցեր:

ԱՀԿ տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Ժուժաննա Յակաբի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի և ԱՀԿ համագործակցության ընթացքին առնչվող մի շարք հարցեր:

Այցիս շրջանակներում, Պոլսո Հայոց պատրիարքությունում հանդիպում եմ ունեցել Ստամբուլի հայ համայնքի հետ: Հանդիպման ընթացքում կարևորել եմ հայ համայնքի դերը Հայաստանի առողջապահության համակարգի հզորացման գործում և կոչ արել մեր հայրենակիցներին՝ գործնականորեն միանալու այդ հայրենանվեր նախաձեռնությանը, որի նպատակը պետք է լինի փոխշահավետ համագործակցության ծավալումը, այդ թվում նաև հայրենիքի առողջապահական համակարգում կոնկրետ ներդրումների ներգրավումը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Խորհրդակցության ընթացքում պաշտոնապես հայտարարվեց ԱՀԿ եվրոպական տարածաշրջանում հանրային առողջապահության համակարգերի պատրաստվածության և արձագանքման մակարդակների բարձրացման Տարածաշրջանային ծրագրի մեկնարկը, որը հաստատվել էր դեռևս 2018 թ. սեպտեմբերին Հռոմում կայացած ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի 68-րդ նիստին: Ծրագրի նպատակն է ԱՀԿ եվրոպական տարածաշրջանում ազգային մակարդակի վրա ուժեղացնել հանրային առողջապահության համար սպառնալիքների դեմ պատտրաստվածությունը և արձագանքման մակարդակը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, օգնություն ցուցաբերել երկրներին:

9. Առաջարկությունները

Խորհրդակցության ընթացքում ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի անդամ-պետությունների առողջապահության բնագավառի հիմնական պատասխանատուների կողմից առաջարկվեցին և ընդունվեցին Տարածաշրջանային ծրագրի լիարժեք իրականացման և արդյունքների մշտադիտարկման մեխանիզմները, ընդգծվեց առողջապահության բնագավառում արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման նշանակությունը, որոշվեցին այն առաջնահերթ ուղղությունները, որոնց իրականացման համար անհրաժեշտ է ԱՀԿ և այլ միջազգային գործընկերների աջակցությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2/20/2019

X

VERIFIED OCSP 2/20/2019 12:52:49 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

19.02.2019 թ.